**2025-2026 ՈՒՍՏԱՐԻ**
**ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**
**ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**
**9 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ - Տևողությունը՝ 90 րոպե**

*Ընտրովի պատասխաններով առաջադրանքներ*

**1. Ի՞նչ է Սահմանադրությունը:**
1. Կանոնների ժողովածու է
2. Օրենք է
3. Նորմատիվ իրավական ակտ է, որը համարվում է պետության հիմնական օրենքը
4. Նորմերի համակարգ, որը կարգավորում է պետության հիմնական ոլորտները

**2. Մարդկանց ո՞ր խմբերի ձևավորումը հիմք դրեց բանակի ստեղծմանը:**
1. Պաշտպանական 2. Հարձակողական 3. Որոնողական 4. Մարտական

**3. Ինչերի՞ կատարելագործումը փոփոխություն մտցրեց ռազմարվեստում:**
1. Զենքերի
2. Զենքերի, զինամթերքի և պաշտպանական միջոցների
3. Զինամթերքների և պաշտպանական այլ միջոցների
4. Հակառակորդի հարձակման միջոցների

**4. ՀԽՍՀ պետական դրոշի վերին մասում, ձողի մոտ պատկերված հնգաթև աստղը ինչո՞վ էր շրջանակված:**
1. Արծաթյա զարդերիզով:
2. Ոսկյա զարդերիզով:
3. Բրոնզափայլ զարդերիզով:
4. Պողպատափայլ զարդերիզով:

**5. Կրակային պատրաստությունն ավելի արդյունավետ ուսուցանելու համար ռազմական ո՞ր պատրաստության հետ է այն անցկացվում:**
1. Մարտավարական պատրաստության հետ:
2. Ռազմատեղագրական պատրաստության հետ:
3. Շարային պատրաստության հետ:
4. Դիպուկահարի պատրաստության հետ:

**6. Կրակային պատրաստությունն ավելի արդյունավետ ուսուցանելու համար ռազմական ո՞ր պատրաստության հետ է այն անցկացվում:**
1. Մարտավարական պատրաստության հետ:
2. Ռազմատեղագրական պատրաստության հետ:
3. Շարային պատրաստության հետ:
4. Դիպուկահարի պատրաստության հետ:

**7. Որո՞նք են համարվում կողմնորոշիչներ:**
1. Տեղանքի այն տեղային առարկաներն ու ռելիեֆի ձևերը, որոնք շրջապատից առանձնանում են իրենց տեսքով:
2. Տեղանքի այն տեղային առարկաներն ու ռելիեֆի ձևերը, որոնք շրջապատից առանձնանում են իրենց տեսքով ու ձևով:
3. Տեղանքի այն առարկաներն են, որոնք շրջապատից առանձնանում են իրենց ձևով, գույնով ու չափերով:
4. Տեղանքի այն տեղային առարկաներն ու ռելիեֆի ձևերը, որոնք շրջապատից առանձնանում են իրենց ձևով, գույնով ու չափերով:

**8. Ո՞րն է համարվում հանդիպական մարտ:**
1. Հարձակվող հակառակորդի վրա գրոհը:
2. Նահանջող հակառակորդի վրա հարձակումը:
3. Հարձակվող հակառակորդի վրա հարձակումը:
4. Փախչող հակառակորդի հետապնդումը:

**9. Ժամանակակից համազորային մարտին մասնակցում են.**
1.Զինված ուժերի բոլոր զորատեսակները:
2.Բանակը և աշխարհազորը:
3.Զինված ուժերի զորամիավորումները:
4.Բանակը, ոստիկանության զորքերը, սահմանապահ զորքերը, փրկարար ծառայության հատուկ ստորաբաժանումները և ԱԱԾ հատուկ ստորաբաժանումները:

**10. Որո՞նք էին բանակի պարզագույն առաջին ստորաբաժանումները:**
1. Տասնյակները
2. Հետևակային զնդերը
3. Հեծելազորային ջոկատները
4. Հետևակը և հեծելազորը

**11. Համապատասխանեցրու՛ և նշի՛ր ճիշտ պատասխանը:**

| | |
|---|---|
| 1. Զիրավի ճակատամարտ | ա/ 451թ |
| 2. Ավարայրի ճակատամարտ | բ/ 371թ |
| 3. Ներսեհապատի ճակատամարտ | գ/ 1727թ |
| 4. Հալիձորի ճակատամարտ | դ/ 482թ |

1. 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
2. 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
3. 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
4. 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

**12. Համապատասխանեցրու՛ և նշի՛ր ճիշտ պատասխանը:**

| | |
|---|---|
| 1. Զորատեսակ | ա. Սեփական ցանկությամբ զինվորական ծառայության անցած անձ: |
| 2. Զորամիավորում | բ. Զինված ուժերի համակարգում ինքնուրույն գործող մարտավարական և վարչատնտեսական միավոր: |
| 3. Զորամաս | գ. Տարբեր զորատեսակների ստորաբաժանումների միավորում: |
| 4. Կամավորական | դ. Պետության զինված ուժերի տեսակ, որը նախատեսված է որոշակի աշխարհագրական տարածքում հատուկ ռազմական գործողություններ կատարելու համար: |

1. 1-դ, 2- գ, 3-բ, 4-ա
2. 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3. 1-ա ,2-բ, 3-գ, 4-դ
4. 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

**13. Համապատասխանեցրու՛ և նշի՛ր ճիշտ պատասխանը:**

| | |
|---|---|
| 1. Թևանցում | ա/ Կրակի կենտրոնացումն է կարևոր նշանակետերի վրա, ժամանակին կրակի տեղափոխումը մի նշանակետից մյուսը կամ միաժամանակ մի քանի նշանակետերի վրա կրակ բացելը: |
| 2. Շրջանցում | բ/ Իրականացվում է գրոհով հակառակորդին թևանցելու և թևերին հարվածելու նպատակով: |
| 3. Նահանջ | գ/ Ավելի խոր զորաշարժ է, որն իրականացվում է՝ հակառակորդին թիկունքից հարված հասցնելու և ավելի նպաստավոր դիրք գրավելու նպատակով: |
| 4. Կրակի խուսանավում | դ/ Հարկադրական կամ կանխամտածված զորաշարժն է: |

1. 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
2. 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3. 1-ա ,2-բ, 3-գ, 4-դ
4. 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

14. **Զինվորները զորացրվելիս իրար մեկական լուսանկար փոխանակեցին: Քանի՞ լուսանկար փոխանակվեց, եթե նրանք 20 հոգի էին:**

1. 382　　2. 380　　3. 360　　4. 400

**15. Ճնշման տակ գործող, վտանգավոր փոշի տեղափոխող խողովակը վնասված ճեղքից դուրս է մղել փոշին, որը նստել է գետնին շրջանային սեկտորի տեսքով:**

**Որքա՞ն է փոշեծածկ տարածքի մակերեսը, եթե՝ R = 24 մ, իսկ α կենտրոնական անկյունը $60^0$ է:**

1. 48 π　　2. 72 π　　3. 96 π　　4. 120 π

*Կարճ պատասխաններով առաջադրանքներ*

**16.**Որքա՞ն է ՀՀՄ 2-ի և 3-ի վրա տեղադրված հակատանկային հրթիռային համալիրի մարտալրակազմը:

**17.**Որքա՞ն է ԶՓ-80-ի վրա տեղադրված հակատանկային հրթիռային համալիրի մարտալրակազմը:

**18.**Ըստ սեպագիր տվյալների Սարդուր 2-ի օրոք քանի՞ հազար զինվոր ուներ Հայաստանը:

**19.**Պատերազմի ժամանակ քանի՞ հազար հեծյալ կարող էին դուրս բերել առավել հայտնի սղնախները (Ջրաբերդը, Կաչաղակաբերդը, Շոշը, Գտիչ-Գորոզը):

**20.**Քանի՞ տարի է պահպանվում սիբիրախտի հարուցիչը հողում: